



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ	1
2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ	4
3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ	6
4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ	10
5. ԱՄՓՈՓՈՒՄ	13

1. ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

2021 թվականի առաջին եռամսյակում համաշխարհային տնտեսությունը, այդ թվում՝ ՀՀ գործընկեր երկրների տնտեսությունները թևակոխել են տնտեսական աճի վերականգնման փուլ՝ հիմնականում պայմանավորված հարկաբյուջետային միջոցառումների իրականացման, դրամավարկային պայմանների մեղմացման, սահմանափակումների աստիճանաբար վերացման, համավարակի հաղթահարման նպատակով պատվաստանյութերի լայնորեն կիրառման դրական ազդեցություններով:

Սակայն, Հայաստանում տնտեսական վերականգնման նշաններ դեռևս տեսանելի չեն, և շարունակվում են համավարակի և Արցախյան պատերազմի բացասական տնտեսական հետևանքների դրսևորումները: Այդ պայմաններում 2021 թվականի հունվար-մարտին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գրանցվել է տնտեսական ակտիվության ցուցանիշի (ՏԱՑ) 2.0% անկում: Հունվար-փետրվար ամիսների անկումներից հետո՝ մարտ ամսին, տնտեսության բոլոր ճյուղերում գրանցվել է աճ, ինչը հիմնականում բացատրվում է այն հանգամանքով, որ 2020թ. տնտեսական ճգնաժամը սկսվել էր հենց մարտ ամսից: Այսինքն՝ նախորդ տարվա ցածր բազայի նկատմամբ գրանցվել է փոքր աճ: Հունվար-մարտ ամիսներին տնտեսական անկումը հիմնականում շարունակել է պայմանավորվել ծառայությունների ճյուղի խոր անկմամբ (նպաստումը՝ 1.6 տոկոսային կետ): Թողարկման ծավալների նվազում առաջին երեք ամիսների տվյալներով գրանցվել է տնտեսության բոլոր ճյուղերում, բացառությամբ շինարարության: Արդյունաբերության և առևտրի բացասական նպաստումները կազմել են համապատասխանաբար 0.9 և 0.7 տոկոսային կետ:

Արդյունաբերությունը հունվար-մարտին նվազել է 3.9%-ով (նպաստումը ՏԱՑ-ի անկմանը կազմել է 0.9 տոկոսային կետ)՝ հիմնականում պայմանավորված մշակող արդյունաբերության նվազմամբ (նպաստումը՝ 7.3 տոկոսային կետ): Միևնույն ժամանակ, արդյունաբերության մյուս ենթաճյուղերը, ներառյալ հանքարդյունաբերությունը, հակազդել են անկմանը: Մշակող արդյունաբերության նվազումը հիմնականում պայմանավորված է արտահանվող արտադրատեսակների արտադրության նվազմամբ:

Գյուղատնտեսության և ձկնորսության համախառն արտադրանքը հունվար-մարտ ամիսներին նվազել է 0.7%-ով՝ հիմնականում պայմանավորված անասնաբուծության նվազմամբ (նպաստումը՝ 0.7 տոկոսային կետ), իսկ

ծկնորսության աճը փոքր-ինչ հակազդել է ճյուղի ընդհանուր նվազմանը (նպաստումը՝ 0.3 տոկոսային կետ):

Շինարարության ճյուղում գրանցվել է 4.7% աճ՝ պայմանավորված հիմնականում պետական բյուջեի (նպաստումը՝ 18.1 տոկոսային կետ) և բնակչության միջոցներով (նպաստումը՝ 3.2 տոկոսային կետ) իրականացված շինարարության ծավալների աճերով: Մինչդեռ կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության ծավալների նվազումն էականորեն հակազդել է (նպաստումը՝ 18.4 տոկոսային կետ) ընդհանուր շինարարության աճին:

Ծառայությունները նվազել են 8.1%-ով՝ պայմանավորված հիմնականում «մշակույթ, զվարճություններ և հանգիստ» (նպաստումը՝ 8.0 տոկոսային կետ), ինչպես նաև «տրանսպորտ» (նպաստումը՝ 2.0 տոկոսային կետ) ենթաճյուղերի նվազմամբ, իսկ առևտրի 5.6% նվազումը պայմանավորված էր հիմնականում մանրածախ առևտրի նվազմամբ (նպաստումը՝ 4.2 տոկոսային կետ): «Տեղեկատվություն և կապ» ենթաճյուղի աճը շարունակել է հակազդել ընդհանուր ծառայությունների նվազմանը 1.7 տոկոսային կետով:

Առևտրի և ծառայությունների նվազումն ուղեկցվել է սպառողական վարկավորման ծավալների, ինչպես նաև բնակչության տնօրինվող եկամտի նվազմամբ: Մյուս կողմից՝ զբոսաշրջիկների այցելությունների նվազման խոր տեմպերի պահպանումը (71.9%) իր հերթին բացասական ազդեցություն ունեցավ ծառայությունների որոշ տեսակների, առևտրի, ինչպես նաև ուղևորափոխադրումների վրա:

2021 թվականի առաջին եռամսյակում արձանագրվել է ինչպես սպառման, այնպես էլ մասնավոր ներդրումների նվազում: Այսպես, վերջնական սպառման ծախսերը իրական արտահայտությամբ նվազել է շուրջ 1.1%-ով, իսկ մասնավոր ներդրումները (համախառն կուտակումը)՝ 32.7%-ով: Վերջինս բավական մտահոգիչ է, քանի որ տնտեսությունը ճգնաժամային վիճակից հանելու հիմնական շարժիչը պետք է լինեին ներդրումները, որոնց նվազումը նման տեմպով վտանգում է տնտեսության վերականգնումը և ապագա տնտեսական աճը:

Առաջին եռամսյակում արտաքին առևտրի հաշվեկշիռը նախորդ տարվա համեմատ բարելավվել է՝ պայմանավորված ներմուծման ծավալների կրճատմամբ: Ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալների նվազումը կազմել է շուրջ 21.9%, իսկ ներմուծման կրճատումը՝ 21.7%:

2021 թվականի մարտին 12-ամսյա գնաճը կազմել է 5.8%՝ գերազանցելով ՀՀ կենտրոնական բանկի նպատակային՝ (4 +/- 1.5%) ցուցանիշը: 2021 թվականի փետրվարին գնաճի և գնաճային սպասումների արագացմանը հակազդելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացրել է ևս 0.25 տոկոսային կետով (նախորդ տարվա դեկտեմբերին վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացվել էր 1.0 տոկոսային կետով)՝ սահմանելով այն 5.5%: Սակայն, ապրիլին գնաճի տեմպը շարունակել է արագանալ՝ հասնելով 6.2%-ի:

Այսպիսով, ըստ վերը նկարագրվածի՝ կարող ենք նշել, որ ՀՀ տնտեսությունը դեռևս շարունակում է գտնվել անկման փուլում: Որոշակի աճի նշաններ դրսևորող ցուցանիշները հիմնականում պայմանավորված են համեմատվող ժամանակահատվածի ցածր ցուցանիշների առկայությամբ: Տնտեսության աշխուժացումը և արագ վերականգնման հնարավորությունները դեռևս տեսանելի չեն՝ կապված ներդրումների, արտահանման և բնակչության եկամուտների նվազող դինամիկայի հետ, ինչպես նաև տնտեսական քաղաքականության միջոցառումների բացակայությամբ:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ

Համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամը շարունակել է իր բացասական ազդեցությունն ունենալ առաջին եռամսյակի պետական բյուջեի եկամուտների վրա:

2021 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով, համավարակի և Արցախյան պատերազմի հետևանքով առաջացած տնտեսական ճգնաժամի ազդեցությունների շարունակության պայմաններում, ՀՀ պետական բյուջեի ընդհանուր եկամուտները նվազել են նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ 5.7%-ով՝ կազմելով 349.3 մլրդ դրամ: Եկամուտների նվազումը հիմնականում պայմանավորված է հարկային եկամուտների և պետական տուրքերի կրճատմամբ, որոնց ծավալը կազմել է 332.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 4.6%-ով:

Հարկային եկամուտների նվազումը հունվար-մարտ ամիսներին հիմնականում պայմանավորված է եղել շահութահարկի (նվազումը՝ 35.9%), ակցիզային հարկի (նվազումը՝ 32.0%) և ԱԱՀ-ի (նվազումը՝ 2.2%) գծով մուտքերի անկումներով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկերի նվազմանը կազմել են համապատասխանաբար 3.9, 2.5 և 0.8 տոկոսային կետ:

Միաժամանակ, եկամուտները գերակատարվել են ինչպես բյուջեով նախատեսված պլանի, այնպես էլ ճշտված պլանի նկատմամբ: Գերակատարման չափը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 5.8%՝ ընդհանուր եկամուտների գծով և 7.3%՝ հարկային եկամուտների գծով: Գերակատարման զգալի մասը պայմանավորված է եղել գնաճի արագացմամբ և փոխարժեքի արժեզրկմամբ, ինչը պետական բյուջեի մշակման ժամանակ չէր կանխատեսվել (2021թ. բյուջեի հիմքում դրված մակրոտնտեսական կանխատեսումներով՝ 2021թ. միջին գնաճը կանխատեսվել էր ընդամենը 1.9%):

Պետական բյուջեի պաշտոնական դրամաշնորհները նույնպես նվազել են՝ նախորդ տարվա 1.8 մլրդ դրամից դառնալով 1.2 մլրդ դրամ: Հատկանշական է դրանց թերակատարման չափը՝ մոտ 86.3%: Այսինքն՝ պլանավորված դրամաշնորհները չեն ստացվել, ինչը խոսում է այն մասին, որ կառավարությունը չի կատարել դրանց ստացման համար անհրաժեշտ նախապայմանները (որոնք նախօրոք համաձայնեցվում են կառավարության հետ): Մասնավորապես, չեն ստացվել բյուջեով սահմանված 9 ծրագրերի շրջանակներում նախատեսված 2 մլրդ դրամի

դրամաշնորհները, իսկ 7 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցները ստացվել են ոչ ամբողջությամբ՝ 34.2%-ով, որոնք կազմել են շուրջ 1.1 մլրդ դրամ:

Այլ եկամուտների գծով նախատեսված պլանը, ինչպես նաև ճշտված պլանը գերակատարվել է: Փաստացի ցուցանիշը կազմել է 15.2 մլրդ դրամ՝ ճշտված պլանի նկատմամբ գերակատարվելով 37.6%-ով: Սակայն, նախորդ տարվա առաջին եռամսյակի նկատմամբ բյուջեի այլ եկամուտները նվազել են 22.1%-ով: Կատարողականի բարձր ցուցանիշը հիմնականում պայմանավորված է բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների օգտագործումից ստացված տոկոսավճարների (հիմնականում եվրապարտատոմսերի տեղաբաշխմամբ գեներացված ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից), ապրանքների մատակարարումից ու ծառայությունների մատուցումից և իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից մուտքերի եռամսյակային ծրագրի գերազանցմամբ:

Աղյուսակ 1. Պետական բյուջեի եկամուտները, մլրդ դրամ

	Առաջին եռամսյակի պլան	Առաջին եռամսյակի ճշտված պլան	Փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը եկամուտներ, այդ թվում՝	319.5	330.2	349.3	105.8
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	305.0	310.2	332.9	107.3
Պաշտոնական դրամաշնորհներ	5.2	9.1	1.2	13.7
Այլ եկամուտներ	9.4	11.0	15.2	137.6

3. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ

Հարկային եկամուտների նվազման պայմաններում 2021 թվականի առաջին եռամսյակում արձանագրվել է պետական բյուջեի ծախսերի աճ՝ պայմանավորված պետական բյուջեով նախատեսված, ինչպես նաև հակաճգնաժամային միջոցառումների և Արցախյան պատերազմի հետևանքով ծագած լրացուցիչ ծախսերի կարիքով: Վերջինս, սակայն, նախատեսված չէր բյուջեով, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել զգալիորեն ճշգրտել բյուջեի ինչպես ընթացիկ, այնպես էլ կապիտալ (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) ծախսերի պլանները:

Այսպես, պետական բյուջեի ընդհանուր ծախսերը կազմել են 404.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճելով 21.9%-ով: Այն բավական մոտ է բյուջեի պլանավորված ցուցանիշին, սակայն, ճշտված պլանի ցուցանիշի՝ 466.9 մլրդ դրամի համեմատ զգալիորեն ցածր է: Սա նշանակում է, որ կառավարության ծախսերի աճը հիմնականում պայմանավորված է նախապես չպլանավորված ծախսերի իրականացմամբ, իսկ պլանավորվածները թերակատարվել են: Արդյունքում ընդհանուր ծախսերի կատարողականը կազմել է 86.7%: Հարկ է նշել նաև, որ առաջին եռամսյակի պլանի ճշտումը կատարվել է ժամանակային տեղափոխումների միջոցով, այսինքն՝ հաջորդ եռամսյակների համար նախատեսված գումարների հաշվին: Արդյունքում, տարեկան պլանը վերանայվել է ընդամենը 6.0 մլրդ դրամով՝ 1,850.9-ից դառնալով 1856.9 մլրդ դրամ:

Պլանի ճշտման զգալի մասը բաժին է ընկել ընթացիկ ծախսերին՝ ներառելով Արցախյան պատերազմի հետևանքով տուժած քաղաքացիներին սոցիալական օգնության տրամադրումը, ինչպես նաև կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված հակաճգնաժամային ծրագրերի սոցիալական և տնտեսական միջոցառումների իրականացումը և առողջապահական ծախսերի աճը: Փաստացի ընթացիկ ծախսերը կազմել են 355.8 մլրդ դրամ՝ ճշտված պլանի նկատմամբ թերակատարվելով 11.5%-ով:

Կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ) գծով նույնպես կատարվել է պլանային ցուցանիշի զգալի վերանայում հաջորդ ամիսների համար նախատեսված ծախսերի հաշվին: Կապիտալ ծախսերի ճշտված պլանը կազմել է 64.7 մլրդ դրամ՝ նախօրոք ծրագրավորված 29.6 մլրդ դրամի փոխարեն: Փաստացի իրականացված կապիտալ ծախսերը կազմել են 49.1 մլրդ դրամ և թերակատարվել են ճշտված պլանի նկատմամբ 24.2%-ով: Նախորդ տարվա նույն

Ժամանակահատվածում թերակատարումը կազմել էր գրեթե 60.0%: Թեև, ինչպես կարելի է նկատել, կատարողականը բավականին բարելավվել է, այդուհանդերձ կապիտալ ծրագրերի կառավարման խնդիրը շարունակում է մնալ արդիական: Ընդ որում, հիմնականում ցածր կատարողական է արձանագրվել արտաքին աջակցությամբ իրականացվող ծրագրերի մասով, որոնց շրջանակներում օգտագործվել է եռամսյակային ծրագրված միջոցների ընդամենը 43.2%-ը:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կապիտալ ծախսերն աճել են շուրջ 2.9 անգամ, ինչը հիմնականում պայմանավորված է ՀՀ պաշտպանության նախարարության շենքային պայմանների բարելավման ծախսերի աճով (հենց այդ ծրագրերի իրականացման համար է կատարվել պլանի ճշտումը):

Աղյուսակ 2. Պետական բյուջեի ծախսերն ըստ տնտեսագիտական դասակարգման, մլրդ դրամ

	Առաջին եռամսյակի պլան	Առաջին եռամսյակի ճշտված պլան	Փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Ընդամենը ծախսեր	404.2	466.9	404.9	86.7
Ընթացիկ ծախսեր	374.5	402.2	355.8	88.5
Աշխատանքի վարձատրություն	37.8	37.6	34.0	90.3
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	41.7	35.5	25.4	71.6
Տոկոսավճարներ	37.8	37.8	37.3	98.6
Սուբսիդիաներ	28.6	28.7	23.5	81.9
Դրամաշնորհներ	36.1	43.8	40.0	91.2
Սոցիալական նպաստներ և կենսաթոշակներ	131.3	157.8	147.3	93.3
Այլ ծախսեր	61.2	60.9	48.3	79.3
Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ	29.6	64.7	49.1	75.8
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր	29.6	64.7	49.6	76.7
Հիմնական միջոցներ	29.6	64.7	49.6	76.7

Շենքեր և շինություններ	24.8	58.1	47.7	82.1
Մեքենաների և սարքավորումների ձեռքբերում, պահպանում և հիմնանորոգում	3.9	4.6	1.8	38.5
Այլ հիմնական միջոցներ	1.0	2.0	0.2	7.9
Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքեր	0.0	0.0	-0.6	0.0

Ընթացիկ ծախսերից 34 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատանքի վարձատրությանը, որը կազմել է եռամսյակային ծրագրի 90.3%-ը և 0.5%-ով (154.4 մլն դրամով) գերազանցել նախորդ տարվա առաջին եռամսյակի ցուցանիշը:

Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով 2021 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեից օգտագործվել է ծրագրով նախատեսված միջոցների 71.6% ը՝ 25.4 մլրդ դրամ, որը 1.2%-ով կամ 306.2 մլն դրամով գերազանցել է նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը՝ հիմնականում պայմանավորված պայմանագրային այլ ծառայությունների ձեռք բերման ծախսերի աճով:

Կառավարության պարտքի սպասարկմանն առաջին եռամսյակում տրամադրվել է 37.3 մլրդ դրամ՝ կազմելով եռամսյակային ծրագրի 98.6%-ը: Մասնավորապես, նշված գումարից 14.5 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 22.8 մլրդ դրամն՝ արտաքին պարտքի սպասարկմանը, որոնք կազմել են ծրագրված ցուցանիշների համապատասխանաբար 98.7%-ը և 98.6%-ը: Նկատենք, որ կառավարության պարտքի սպասարկման ծախսերը կազմել են ընթացիկ ծախսերի 10.5%-ը, իսկ ընդհանուր ծախսերի 9.2%-ը, ինչը արդեն զգալի բարձր է և պայմանավորված է կառավարության պարտքի աճող ծավալներով:

ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի մասին օրենքով նախատեսվել էր թվով 174 ծրագրերի իրականացում 46 պետական մարմինների և ՀՀ կառավարության պատասխանատվության ներքո: ՀՀ կառավարության կողմից կատարված ճշտումների արդյունքում նախատեսված ծրագրերի թիվը կազմել է 170, որոնցից առաջին եռամսյակում փաստացի միջոցներ են օգտագործվել 158-ի գծով, ընդ որում

ՀՀ կառավարության պատասխանատվությամբ 3 ծրագրերի շրջանակներում նախատեսված միջոցներն ըստ անհրաժեշտության վերաբաշխվել են համապատասխան ծրագրերին և միջոցառումներին: Ծրագրերի շրջանակներում նախատեսված 713 միջոցառումներից ամբողջությամբ կամ մասնակիորեն կատարվել են 567-ը կամ 79.5%-ը:

2021թ. բյուջեով նախատեսված ծրագրերի շարքում, նշանակալի շեղումներ են արձանագրվել «ոռոգման համակարգի առողջացում», «ճանապարհային ցանցի բարելավում», «ջրամատակարարման և ջրահեռացման բարելավում», «քաղաքային զարգացում» ուղղություններով, որոնց կատարողականները կազմել են համապատասխանաբար 24.8%, 43.9%, 31.2% և 65.4%: Նշված ծրագրերի համար ընդհանուր նախատեսվել էր 21.2 մլրդ դրամ, որից կատարվել է ընդամենը 8.7-ը: Պետք է նկատել, որ նշված ծրագրերը հիմնականում կապիտալ բնույթի են, որոնց թերի իրականացումը նույնպես կարելի է դիտարկել ընդհանուր կապիտալ ծախսերի թերակատարման հիմնախնդրի շրջանակում:

ՀՀ կառավարության հակաճգնաժամային միջոցառումները: 2020 թվականի ընթացքում տեղի ունեցած բացասական զարգացումների (կորոնավիրուսի համավարակ և Արցախյան պատերազմ) հետևանքների հակազդմանը և մեղմանն ուղղված միջոցառումները շարունակվել են նաև 2021 թվականի առաջին եռամսյակում:

Կորոնավիրուսի տարածմամբ պայմանավորված՝ սոցիալ-տնտեսական բացասական հետևանքների մեղմման ուղղությամբ իրականացվել են շուրջ 7.2 մլրդ դրամի չափով ծրագրեր, որոնց կազմում առողջապահական ծրագրերին ուղղված ծախսերը կազմել են 4.7 մլրդ դրամ, իսկ տնտեսական աջակցության ծրագրերը՝ 2.5 մլրդ դրամ:

Արցախյան պատերազմի հետևանքների հակազդման ուղղությամբ իրականացված ծախսերը կազմել են շուրջ 18.6 մլրդ դրամ, որից սոցիալական աջակցության ծախսերը կազմել են 18.5 մլրդ դրամ:

4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱԿԱՍՈՒՐԴԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում COVID-19-ի համավարակի տարածման հետևանքով տնտեսական անկման պայմաններում հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունն ամբողջական պահանջարկի վրա գնահատվում է զգալի խթանող: Համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականությունը 2021 թվականի առաջին եռամսյակում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ունեցել է 3.4 ընդլայնող ազդեցություն՝ պայմանավորված և՛ եկամուտների (1.2) և՛ ծախսերի (2.2) ընդլայնող ազդեցություններով:

Վերոհիշյալ զարգացումների արդյունքում պետական բյուջեն եղել է պակասուրդային: 2021 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ձևավորվել է պետական բյուջեի 55.6 մլրդ դրամ պակասուրդ (դեֆիցիտ)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 38.0 մլրդ դրամի հավելուրդի համեմատ:

Հարկ է նշել, որ պակասուրդի ձևավորված մակարդակը փոքր է եղել ինչպես բյուջեի նախնական, այնպես էլ ճշտված պլանի ցուցանիշից: Դա բացատրվում է մի կողմից՝ եկամուտների գերակատարմամբ, մյուս կողմից՝ ծախսերի թերակատարմամբ: Սակայն, առավել նշանակալի գործոն է եղել ծախսերի թերակատարումը: Այսպես, փաստացի պակասուրդը ճշտված պլանից շեղվել է 81.1 մլրդ դրամի չափով, որից 62.1 մլրդ դրամը պայմանավորված է ծախսերի թերակատարմամբ:

Բյուջեի պակասուրդը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրների հաշվին՝ տարեսկզբին թողարկված եվրապարտատոմսերից ստացված գումարների միջոցով (շուրջ 357.7 մլրդ դրամի չափով): Հաշվետու ժամանակահատվածում ֆինանսավորման ներքին աղբյուրներից փոխառու միջոցների հաշվին պետական բյուջեն ֆինանսավորվել է 18.5 մլրդ դրամով՝ 58.9%-ով ապահովելով եռամսյակային ծրագիրը: Ներքին աղբյուրներից ֆինանսական զուտ ակտիվների հաշվին ֆինանսավորումը կազմել է -290.7 մլրդ դրամ՝ հաշվետու ժամանակահատվածի համար ծրագրված -230.7 մլրդ դրամի դիմաց¹՝ կապված եվրապարտատոմսերի նախատեսվածից ավելի ծավալով թողարկման հետ (ավել ներգրավված գումարները տեղաբաշխվել են որպես ավանդ և հանդիսանում են կառավարության ներքին ակտիվների ավելացում):

¹ «-» նշանը ցույց է տալիս, որ նշված գումարի չափով տեղի է ունեցել ակտիվների համալրում:

Աղյուսակ 3. Պետական բյուջեի պակասուրդը և ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ

	Առաջին եռամսյակի պլան	Առաջին եռամսյակի ճշտված պլան	Փաստացի	Կատարողականը ճշտված պլանի նկատմամբ, %
Բյուջեի պակասուրդը	84.6	136.7	55.6	40.7
Պակասուրդի ֆինանսավորումը՝				
Ա.Ներքին աղբյուրներ- ընդամենը	-129.6	-199.3	-272.2	136.6
1. Փոխառու զուտ միջոցներ	31.4	31.4	18.5	58.9
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	-161.0	-230.7	-290.7	126.0
Բ. Արտաքին աղբյուրներ- ընդամենը	214.3	336.0	327.8	97.6
1. Փոխառու զուտ միջոցներ	230.8	366.3	357.7	97.7
2. Ֆինանսական զուտ ակտիվներ	-16.5	-30.3	-29.9	98.7

2021 թվականի մարտի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 4,591.6 մլրդ դրամ (8,652.0 մլն ԱՄՆ դոլար): ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով արտահայտված՝ ՀՀ պետական պարտքի ցուցանիշներն աճել են անհամաչափորեն՝ համապատասխանաբար 25.8%-ով և 18.7%-ով: Դա պայմանավորված է եղել 2020 թվականի և 2021 թվականի առաջին եռամսյակների վերջի դրությամբ ձևավորված ԱՄՆ դոլար / ՀՀ դրամ փոխարժեքների տարբերությամբ, որը փոփոխվել է 6.0%-ով՝ 500.8-ից աճելով մինչև 530.7: ՀՀ պետական պարտքում 4,329.2 մլրդ դրամը (8,157.5 մլն ԱՄՆ դոլարը) կազմել է ՀՀ կառավարության պարտքը, 262.4 մլրդ դրամը (494.5 մլն ԱՄՆ դոլարը)՝ ՀՀ ԿԲ պարտքը:

2021 թվականի մարտի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը նախորդ տարեվերջի համեմատ աճել է 427.3 մլրդ դրամով (683.5 մլն ԱՄՆ դոլարով): Դա պայմանավորված է եղել կառավարության պարտքի աճով, որը կազմել է 10.3% կամ 405.3 մլրդ դրամ (դոլարային արտահայտությամբ՝ 8.6% կամ 648.96 մլն ԱՄՆ դոլար), և որի տեսակարար կշիռը ընդհանուր հավելաճում կազմել է 94.8%: Իսկ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքն աճել է 9.2%-ով կամ 22.04 մլրդ դրամով (դոլարային արտահայտությամբ՝ 7.5%-ով կամ 34.56 մլն ԱՄՆ դոլարով):

2021 թվականի մարտի 31-ի դրությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը նախորդ տարեվերջի համեմատ աճել է 662.3 մլն ԱՄՆ դոլարով (10.9%-ով), և դրա տեսակարար կշիռը ՀՀ պետական պարտքի կառուցվածքում աճել է՝ 76%-ից հասնելով 77.6%-ի: Ընդ որում, ՀՀ կառավարության պարտքն աճել է 627.7 մլն ԱՄՆ դոլարով, իսկ ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքը՝ 34.6 մլն ԱՄՆ դոլարով:

5. ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով կարող ենք նշել, որ 2021թ. առաջին եռամսյակի ինչպես տնտեսական, այնպես էլ հարկաբյուջետային արդյունքները չեն պարունակում տնտեսական արագ վերականգնմանը բնորոշ զարգացումներ: Ավելին, տնտեսությունը դեռևս գտնվում է անկման փուլում, իսկ որոշակի աճի նշաններ դրսևորող ցուցանիշները հիմնականում պայմանավորված են համեմատվող ժամանակահատվածում առավել վատ իրավիճակի առկայությամբ:

ՀՀ պետական բյուջեի կատարումը 2021թ. առաջին եռամսյակում կրում է իրավիճակին հարմարվելու վարքագծի բնույթ, և ակնհայտ է, որ կառավարությունը չունի համակարգային մոտեցում երկրի առջև ծառացած խնդիրների լուծման ուղղությամբ: Այսպես, Հայաստանի համար կարևորագույն խնդիրների լուծմանն ուղղված ծախսերը՝ Արցախյան պատերազմի հետևանքների մեղմանն ուղղված սոցիալական աջակցության ծախսերը, ՀՀ պաշտպանության ապահովմանը և կորոնավիրուսի սոցիալ-տնտեսական հետևանքների մեղմանն ուղղված ծախսերը արտացոլվել են միայն բյուջեի ճշտված պլանում, իսկ նախնական պլանում (որը հաստատվել էր 2020թ. դեկտեմբերին) այդ ծախսերը նախատեսված չեն եղել: Ընդ որում, ճշտումները հիմնականում իրականացվել են հաջորդ եռամսյակների համար նախատեսված գումարների հաշվին, ինչը նշանակում է, որ տարվա ընթացքում բյուջեի պլանը նորից է զգալի չափով ճշտվելու (քանի որ այդ կարևոր ծախսերի կարիքը դեռևս սպառված չէ):

Միաժամանակ, պահպանվում է նախատեսված ծախսերի կատարման անկարողության խնդիրը: Ծրագրերի թերի իրականացման արդյունքում կառավարությունը չի ստանում նախատեսված օտարերկրյա դրամաշնորհները: Բացի այդ, թերի իրականացված կապիտալ ծախսերի արդյունքում վտանգի տակ է դրվում տնտեսության վերականգնումը, ինչը խիստ անհրաժեշտ է ներկա ճգնաժամային պայմաններում: Կարելի է կարծել, թե կառավարությունը գործում է ըստ իրավիճակի՝ չկարևորելով արդեն իսկ հաստատված ծրագրերի իրականացումը և անընդհատ վերանայելով բյուջեի պլանը: Այդ վարքագիծը խիստ վտանգավոր է, քանի որ մի կողմից՝ չեն իրականացվում հարկաբյուջետային քաղաքականության նպատակները մակրոտնտեսական կայունության և տնտեսական աճի ապահովման ուղղությամբ, մյուս կողմից՝ վտանգվում է պետական ֆինանսների կայունությունը՝ ստեղծելով պարտքային ճգնաժամի առաջացման բարձր ռիսկեր:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: